Նախագիծ

<u>*Արձանագրություն*</u>

Ս/թ մարտի 12-ին Կոտայքի մարզի Հայկ Մանուկյանի անվան միջն. Դպրոցի դահլիճում տեղի ունեցավ համայնքի ժողով.

Բացման խոսք

Հարգելի համագյուղացիներ այսօր մեր համայնքում տեղի է ունենում համայնքի ընդհանուր ժողով,ժողովին ներկա են մեր մարզպետարանի ներկայացուցիչները,հարգարժան մարզպետ պարոն Շահգալդյանի գլխավորությամբ: Թույլ տվեք ներկայացնել այսօրվա համայնքի ժողովի օրակարգը:

Օրակարգ

1. *Համայնքի ղեկավարի 2009թ. 4-րդ եռամսյակի և 2010թ. հունվար,փետրվար ամիսների հաշվետվություն.*
   Զեկուցող՝ Շավարշ Սարգսյան
2. *Հարցեր բնակիչների կողմից:*

Եզրափակիչ խոսք ՀՀ Կոտայքի մարզպետ պարոն Կ.Շահգալդյան

Տեղեկատվություն համայնքի բնակչության մասին

2009թ.

1. Համայնքի բնակչությունը 680
2. Տնտեսությունը 213
3. Ընտրողների թիվը 450

2010թ. հունվար.փետրվար

1. Համայնքի բնակչությունը 663
2. Տնտեսությունը 213
3. Ընտրողների թիվը 468

Հողատարածքներ և բերքատվություն 2009թ.

1. Քաղաքացիների սեփականություն հանդիսացող ընդհանուր վարելահողեր
   ա) այգի 23.0 հա մշակվել է 23.0 հա
   բ) վարելահողեր 387.0 հա մշակվել է 70.0 հա

2. Ստացված բերք
ա) 2009թ. ցորեն գարի 70 հա-ից 850 ցենտներ
բ) 2009թ. աճեցվել է բանջարեղեն 5.45 հա-ից 330 ցենտներ

Քաղաքաշինության բնագավառին տրվող հարցեր

1. 2009թ. ընթացքում համայնքում շինարարական թույլտվություն չի տրվել:

Առողջապահական խնդիրներ

Համայնքում գործում է բուժկետ:Բուժկետը վերանորոգված է և սպասարկում է մեկ բուժքույր:

2009թ. բյուջեի կատարողականը

2009թ. բյուջեն կատարվել է բարձր տոկոսով

1. Հողի հարկ 139,6
2. Գույքահարկ 117,3
3. Տեղ.տուրք 66,6
4. Հողի վարձավճար 97,2

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ Կաստայքի մարզպետ պարոն Կ. Շահգալդյանը,բնակիչների կողմից տրված հարցերին մանրամասնորեն պատասխանեց պարոն Շահգալդյանը:

Համայնքի քառամյա զարգացման ծրագիր

Ելնելով համայնքի քառամյա ծրագրից կարևորում եմ համայնքանպաստ այն խնդիրները,որոնք առաջացել են բնակիչների հետ հանդիպումների,առաջարկությունների,ընդունելություն ների ժամանակ:
Հատկապես կարևոր եմ համարում.

1. Համայնքին ոռոգման ջրով ապահովելը
2. Ճանապարհների նորոգում
3. Գիշերային լուսավորման ապահովում
4. Դպրոցի տարածքի ցանկապատում
5. Խմելու ջրի շուրջօրյա ապահովում
6. Աղբահանության խնդիրները
7. Պատմամշակութային հուշարձանների պահպանումը

Կարևոր եմ համարում նշել,որ վերանորոգվել է հայրենական մեծ պատերազմի հուշարձանի պատվանդանը,աղբյուր հուշարձանը:
Առանձնալի նշանակություն եմ համարում ավագանու,համայնքի ղեկավարի ընդունված որոշումների հրապարակայնությունը:Համոզված լինելով,որ համայնքի բնակչության հետ բավարար հաղորդակցությունը կնպաստի մեր աշխատանքների լիակատար զարգացումներին: